



ՕՐԱԳԻՐ

ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԲՆԱԿԱՆ

ԳԻՏԵԼԵԱՑ

ԺԳ. ՏԱՐԻ. ԹԻԻ 3.

1855

ՓԵՏՐՈՒԱՐԻ 1.

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԳԼՈՒԽ Դ.

Զգուշանայո՛ւ է որ դաստիարակութիւնը Ուսման զոհ չլըլայ :
(Տես Հտ. ԺԲ, երես 341)

Պարտաւ տեղը այն զանազանութիւնը կ'ընեն ոմանք՝ թէ երկու կերպ է Ուսման տուած հմտութիւնները . Գրական և գիտական հմտութիւններ , որոնք պարզ հայեցողական են , և Բարոյական և գործնական հմտութիւններ . և այս տեսութեամբ կրնանք զասոնք բաժնել՝ Գրական և գիտական ուսումն , ու Բարոյական ուսումն . և թէ որ գրագիտական ուսումը միշտ հոգւոյն դաստիարակութիւն չընէ , աւելի կը յուսացուի որ նոյն բանը բարոյական ուսումը ընէ :

Եւս բանը կարելի է . բայց թէ որ մէկը կարծելու ըլլայ թէ Բարոյական ուսում միայն՝ Բարոյական դաստիարակութիւն կրնայ ըլլալ , և թէ բարոյական հմտութիւններով կ'ըլլայ մարդու բարոյական ունակութիւնները , շատ կը սխալի այնպիսին . վասն զի ասոնք ալ իրարմէ բոլորովին տարբեր բաներ են : Եւսանկ ըսելու ըլլանք նէ , Սենեկա քան զամէն մարդ առաքինի պիտի ըլլար : Բայց չէ . կրնայ գտնուիլ մէկը՝ որ քաջ ուսեալ ըլլայ բարոյականի մէջ , ու շատ նուազ

առաքինի : Այս բանս հասկերնալու գը-
ժուարութիւն մը չկայ : Ուսումնը ուղ-
ղակի հարց համար է միայն . անանկ որ
իրեն տուած ծանօթութիւնները , նոյն
խիստ բարոյականի վրայօք ալ , մտաւորա-
կան ծանօթութիւններ են միայն : Ու-
րեմն հարկաւոր է նաեւ Բարոյական Դաս-
աբարակութիւնը , որ է կարողութիւննե-
րը , ունակութիւնները , յօժարութիւն-
ներն ու բարոյական առաքինութիւն-
ները զարգացնել :

Այս տարակոյս չկայ որ Բարոյական Դաս-
աբարակութիւնը՝ Բարոյական ուսման կարօ-
տութիւն ունի , որ մարդկանց պարտե-
րը բացայայտէ . բայց հարկ է որ օրի-
նակներ ալ աւելցնեն , յորդորներ , վար-
ժութիւններ , և այլն : Բարոյական ու-
սումը ըստ ինքեան գեղեցիկ առաժնե-
րով միայն գիտէ զմիտքը զարգարել .
բայց զանոնք սիրելի ընել , ի գործ դնել ,
և սրտին հաւանութիւնն առնուլ՝ Բա-
րոյական Դասաբարակութեան կ'իյնայ . ինքը
միայն Բարոյական ուսման վրայ կրնայ ա-
ւելցնել առաքինութեանց համը , սէ-
րը , կրթութիւնն ու յօժարութիւնը :

Սիով բանիւ՝ Բարոյական Դասաբարա-
կութեան ազդեցութիւնները պիտի ըլ-
լան մտաց , սրտի ու գիտակցութեան
վրայ . բարոյական դաստիարակութիւնը
ամբողջ կը բովանդակէ զմարդը :

Յայտնի է որ Բարոյական Դասաբարա-
կութեան չկրնար Բարոյական ուսումնը թու-
ղուլ անցնիլ . բայց շատ հարկաւոր է այս
բանս լաւ միտք առնուլ՝ որ մէկը զատ
բան է , մէկալը զատ բան : Հմտութիւն-
ներ տալ , Բարոյականի վրայ ալ ըլլայ , բա-
րոյական արմէցնել է . բայց արմէցը-
նել միայն է և ոչ թէ բարոյականի մէջ
Դասաբարակել : Բարոյականի մէջ Դասաբար-
ակել ըսելը՝ յատուկ բնաւորութիւնը
կազմել ըսել է , սիրտը փափկացնել և
ուժովընել , կամքը ամրացնել , գի-
տակցութիւնն ուղղել ու շտկել , զգացու-
թիւնը մաքրել ազնուացնել . միով
բանիւ՝ ամբողջ հոգին դաստիարակել :

Արդեօք այս բաներս հասարակաց
դաստիարակութեան մէջ ի գործ կը
դրուին . բազմութիւն են այն վերակա-

ցուներն ու վարժապետները , որոնք
յորդոր , խրատ , դաս , ու իրենց վա-
րուց օրինակը տան այս բանիս վրայօք :

Վաստատանց մէջ երբ ջանացեր են
տղոց միտքը համոզելով զարմացնել
Պոսիւէի կրօնական գեղեցկութեանց
վրայ . երբ ջանացեր են նոյն իսկ Վոլին-
տիլիանոսի բարոյական գեղեցկութեան-
ցը վրայ մտքերնին արթնցնել :

Այնք եղեր է՝ որ տղայն չմտածելով
սխալմունք մը որ ընէ , ջանացած ըլլան ,
փոխանակ տգէտ վարժապետի վայրենի
խստութեամբը զինքը չխեղու , որդե-
սէր ծանրութեամբ և կակղութեամբ
ուղղելու :

Այնք ետեւէ եղեր են՝ որ ճշմարիտ
դաստիարակութեան միջոցներով դուլ
բնաւորութիւն ունեցողներուն խելքը ,
զգացողութիւնը , գիտակցութիւնը ար-
թնցնեն :

Այն դաստիարակութիւնը , որ զբնա-
ւորութիւնը կը կազմէ . այն դաստիարա-
կութիւնը , որ տղուն սրտին մէջ առաքի-
նութեան յօժարութեանց ծիլը կ'ար-
ձըկէ , որոնք հարկաւոր են իրեն կե-
նացը հանգիստն ու անմեղութիւնը պա-
հելու . այն դաստիարակութիւնը , որ
զխղճմտանքը անկասկածելի լուսով կը
լուսաւորէ՝ դարուց վկայութեամբը հաս-
տատելով . այն դաստիարակութիւնը , որ
նոր ու վտանգաւոր զգացմանց դէմ կը
զօրացնէ տղայն ու երիտասարդը՝ ա-
ռաքինութեան ըրած նախնական տպա-
ւորութեանց ուժովը . դաստիարակու-
թեան այն մասը , որ հմտութիւնները
ձեռքն առած՝ մտաց ընդարձակութիւն ,
դատմանը ամբութիւն , բանականու-
թեանը ոյժ կու տայ . միով բանիւ՝
Բարոյական Դասաբարակութեան և նոյնպէս
բարձրագոյն իմացական պարգայումը ցա-
ւալի մոռացութեան մէջ թողուած են :
Իսկ հիմակուան մեծ արդիւնքը , որուն
պարծենալով մը ետեւէն կ'երթան , է
ցամաք , ճշգրտ , նիւթական ուսումն .
ուսումն՝ առանց սրտի , առանց հոգւոյ ,
առանց խղճմտանաց , երբեմն՝ առանց
իսկ խելքի :

Հասարակաց ուսման պաշտօնակալին

մէկը, շատ տարի չէ, տերութեան մէջ եղած ուսմանց վիճակը թագաւորին ու ազգին ներկայացընելով, որ պաշտօնական գովութեան ալ արժանի եղաւ, գրուածքին մէջ նշանաւոր բան մը կը խոստովանի, և այդ բանը միայն բաւական է ըսածներուս չհաւանողներուն միտքը պառկեցընելու, և արդարացընելու տղոց տէր եղողներուն գանգատները .

Դաստիարակութեան կողմանէ ,
 Կ'ըսէ , նոյն իսկ ամենէն լաւ դպրոց-
 ներուն մէջ եղած խելացի ու անխոնջ
 Զանքն ալ՝ չափաւոր ազդեցութիւն
 ունի . ու չէ թէ դպրոցը , հապա ծնո-
 ղաց տանը մէջ կը սկսի դաստիարա-
 կութիւնը ու ընկերութեան մէջ կը
 լինայ :

Ի՞նչպէ՛տ և այս խօսքս ճարտարու
թեամբ զուրցուած է, բայց ծանր
վտանգ մը կ'իմացընէ. վասն զի ի՞նչ
սեղ է ծնողաց ասնը մէջ իջ ակտի դաստիա
լահոթիւնը ու ընկերութեան մէջ իջ լինալը
ուրեմն ուր կը տրուի, և ո՞վ է որ կու
տայ այդ դաստիարակութիւնը :

Օ՜նադայ դանը մէջ էր ունի ու ընկերու-
նէան մէջ էր լինուայ. հապա ու թը ինը տա-
րուընէ սկսեալ ինչուան տասնըութը
քսան տարին ո՞վ է որ դաստիարակու-
թեան վրայ կ'աշխատի :

Յաւալի բան . դուք ձեզմէ կը խոս-
տովանիք՝ թէ այն տարիները, որ տղայն
դպրոցը կ'անցընէ, և ուր որ իրեն բոլոր
բարոյական և կրօնական կարողութիւն
ները զարգանալու էին, ու հոն դաս-
տիարակութեան այն մեծ գործքը պի-
տի կատարուէր, հոն՝ ամենէն լաւ դպրոց-
ներէն մէջ՝ նոյն իսկ խելացի ու անխոնջ
ջանն ալ չափաւոր տարբերութիւն ունի :

Իսկ տասը տարուան ահաւոր դատարկութիւնն այդ խօսքով շատ յայտնի կ'իմացուի. ու անկարելի էր ուրիշ աւելի գեղեցիկ ոճով մը պարտրկել: Խրաւցընէ կը տեսնենք որ դաստիարակութեան սկիզբն և դաստիարակութեան վերջ կայ. և կը կարծէ մարդ՝ որ անանկով դաստիարակութիւնը լմնացած է. բայց բան մ'այ եղած չէ. և ոչ իսկ ամէնէն

Հա՛րություններուհի մէջ ըլլալը կարելի է :
Լ՛յսպէս աշխարհքիս մէջ ամենէն ա-
ւելի հարկաւոր բանը, ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒ-
ԹԻՒՆԸ, բառերու խաղի և լեզուի ճար-
տարու լծեան մէջ կր կորսուի :

Համալսարանին ամենէն աւելի պատուաւոր կաճառորդներուն մէկուն սիրտը ասով շարժած՝ խորին դառնութեան զգացմամբ այսպէս կը կանչէր .

“ Սեր դպրոցներուն մէջէն ասկէ
վերջը չէ թէ միայն Բարեպաշտ, Հապա
և ոչ խառնաձի պիտի Հանենք : Սերեմն
ըրածնիս ինչ է : Սամունք միայն կը
օտրվեցընենք, չէ թէ ինչ Դաստիարա-
նէնք . միտքը կը մշակենք ու կը զարգա-
ցընենք, Բայց չէ թէ սիրտը ” :

Լ՝յսպիսի բաներ տեսնելէն վերջը
յայտնի է որ իրաւամբք մեր տերութե
այն պաշտօնակալը, որուն որ տղոց միտ
քը կազմելու ծանր հոգաբարձութիւ
նը յանձնուած է, պաշտօնական կեր
պով ուրիշ անուն վրան չառներ, ինչպէս
որ առաջ ըսինք, բայց եթէ Պաշտօնակա
կասարանց Ուսման անունը : Սորէջեւել,
ասիկայ է միայն բոլոր իր նպատակը .
Դասարանէլ, ասոր ոչ ոք ետեւէն կ'ըլ
լայ, ոչ ոք կը մտածէ, ու կրնամալ ը
սել՝ որ գուցէ ոչ ոք կը համարձակի այս
բանիս ձեռք զարնել : Եւ ինչ է պատ
ճառը : Լ՝հ, անտարակոյս՝ գործքին դը
ժուարութիւնը պիտի ըլլայ . բայց ար
ժան է որ մարդ այս բանիս խեղքը տայ :
ՆԱՆԻ, ԱՅԼ ԿԱՐԵՒՈՐ : Եթէ սորէջե
ւել միայն ըլլայ, թէ որ չըլլայ դաստիա
րակել, եթէ ամէն բան ուսում ըլլայ և
Դասարանէլ-Ինչն ոչինչ, այս թշուառ
երկրիս վախճանը ո՞ր պիտի երթայ :

Եւ, այսօրուրնէ՛ ամենքնիս մէկ սիրտ օգնենք իրարու, միաբանինք այս հասարակաց խաղաղութեան ժամանակ, քաջութեամբ աշխատինք մանկանց թէ Ուսման և թէ Դաստիարակութեանը վրայ, որ յաւիտեան ասոնք իրար մէջ չզատուին, որով և ընտանեաց ակընկալութիւնը, նորահաս սերնդոց պէտքը, և խռովեալ Հայրենեաց իղձը լիով կատարուին :